



ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

### ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ/ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ



**Գրագողությունն ուրիշի ստեղծագործությունը որպես սեփական ներկայացնելն է կամ ուրիշի ստեղծագործության անօրինական հրատարակումը քո անվամբ, այլ կերպ՝ հեղինակության յուրացումը:**

Գրագողությունը կամ հեղինակային իրավունքի խախտումը համարվում է քրեորեն պատժելի արարք և կարգավորվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով: Գիտական էթիկայի բոլոր կանոններով աշխատանք շարադրելու գործընթացն ուսանողի մեջ դաստիարակում է մի շարք կարևոր որակներ՝ ազնվություն, հետևողականություն, ժամանակի պլանավորում, բժախնդրություն, վերլուծելու և տեղեկատվությունը սինթեզելու կարողություն և այլն:

Ռեֆերատներում, կուրսային և ավարտական աշխատանքերում, մագիստրոսական թեզերում, հոդվածներում, մենագրություններում անհրաժեշտ է հստակ հղումներ կատարել (օրինակ՝ [1], [2-3]), եթե տվյալ միտքը վերցված է այլ աղբյուրից, իսկ օգտագործված գրականության ցանկն աշխատանքի վերջում նպատակահարմար է ներկայացնել հետևյալ ձևաչափերին համապատասխան.

Գրքեր.

1. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
2. Будак Б. М., Фомин С. В. Кратные интегралы и ряды. М.: Изд.-во «Наука». 1967. 608 с.
3. Nowacki W. Theory of Asymmetric Elasticity. Oxford. Pergamon Press. 1986. 383 p.

Ամսագրեր/պարբերականներ/հանդեսներ.

1. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հատկությամբ//

Մաթեմատիկական բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: № 1: էջ 5-17:

2. Пальмов В. А. Основные уравнения теории несимметричной упругости // Прикладная математика и механика. 1964. Т. 28. Вып. 6. С. 1117-1120.
3. Iesen D. The plane micropolar strain of orthotropic elastic solids // Archives of Mechanics. 1973. Vol. 5. № 3. P. 547-561.

Ժողովածուներ.

1. Խաչատրյան Ն. Գ., Հարությունյան Ս. Ն. Հայերի մշակութային արժեքային կողմնորոշումների միջմշակութային ուսումնասիրություն // Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան: «Էդիտ Պրինտ» հրատ.: 2011: էջ 80-83:
2. Маргарян Л. М. Построение прикладной динамической модели микрополярных упругих ортотропных тонких стержней асимптотическим методом // Труды международной конференции “Актуальные проблемы механики сплошной среды”. 08-12 октября. 2012. Цахкадзор, Армения. Т. 2. Ереван: Изд.-во ЕГУ АС. 2012. С. 19-23.
3. Kolesnikov A. M., Popov A. V. Pure bending of a pressurized curved tube // Proceedings of the International Conference Shell Structures: Theory and applications. 16-18 October, 2013. Gdansk, Poland. Taylor&Francis Press. London. 2014. P. 113-116.

Գրագողության դեմ պայքարի համար Համալսարանում իրականացվում են հետևյալ քայլերը.

- Ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ՇՊՀ Գիտական տեղեկագրում տպագրության ներկայացված գիտական հոդվածների, տպագրության համար Գիտական խորհրդի երաշխավորությանը ներկայացված մենագրությունների, մեթոդական աշխատանքների համար սահմանել օրիգինալության մակարդակ հետևյալ բանաձևի միջոցով.

**Օրիգինալության մակարդակ %= 100%-գրագողություն%.**

Աշխատանքի տեսակ	Օրիգինալության մակարդակ
Ռեֆերատ, կուրսային աշխատանք	50% և բարձր
Ավարտական աշխատանք	60% և բարձր
Մագիստրոսական թեզ	70% և բարձր
ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում տպագրության ներկայացված գիտական հոդված, Համալսարանի Գիտական խորհրդի երաշխավորությանը ներկայացված մենագրություն, մեթոդական աշխատանք	80% և բարձր

- Նշված շեմերի խախտման դեպքում ուսանողին/դասախոսին տալ նկատողություն և 10-օրյա ժամկետ՝ աշխատանքը վերանայելու համար:
- Երկրորդ անգամ նշված շեմերը խախտելու դեպքում ուսանողին/դասախոսին տալ խիստ նկատողություն և 10-օրյա ժամկետ՝ աշխատանքը կրկին վերանայելու համար:
- Երրորդ անգամ նշված շեմերը խախտելու դեպքում, ամբիոնի նիստի որոշմամբ իջեցնել ուսանողի գնահատականը կամ կրկնակի վերահանձնում նշանակել տվյալ աշխատանքի համար, իսկ դասախոսի դեպքում՝ վերադարձնել աշխատանքը, ստեղծել էթիկայի հանձնաժողով և քննարկել հարցը, նաև գիտական խորհրդում: